

Ախալքალაქում Հունარեն լեզվի կիրակնօրյա դպրոց է գործում

Հույները Ախալքալաք եկան XIX դարի I կեսին՝ Էրզրումից եւ մինչեւ այսօր ապրում են մունիցիպալիտետում, որը աչքի է ընկնում Էթնիկ բազմազանությամբ: Այս պահի դրությամբ Սամցխե-Ջավախեթիում 163 հունական եւ խառը հունա-հայկական ընտանիք կա:

«Վրաստանում բնակվող շատ հունական ընտանիքներ տեղափոխվեցին հունաստան բնակության համար: Ի տարբերություն այլ Հույների Ջավախքում ապրող Հույները չեն լքում հայրենիքը: Դրա համար որոշեցինք Ախալքալաքում հիմնել Հունարեն լեզվի ուսուցման կիրակնօրյա դպրոց, ինչում մեզ օգնեց Վրաստանում Հունաստանի դեսպանությունը: Կենտրոնի գոյությունը պարտադիր է, որ չկտրվեն հայրենի արմատներից, պահպանենք մեր նույնակնությունը եւ որ երիտասարդ սերունդը սովորի լեզուն, որով ստեղծվեց «Իլիականը» եւ «Ոդիսականը»:



Employees: 2 locals
Total udget of the roject: GEL 6,640.00
EUhare: GEL 5,640.00
Co-financing: GEL 1,000.00



Մեր կենտրոնի նորագույն աուդիո ծրագրերով եւ տեխնիկայով կահավորման հարցում օգնեց Եվրամիությունը: Դրամաշնորհի տեսքով հատկացրած գումարով վերանորոգեցինք շենքը, ձեռք բերեցինք նոթբուքներ, ականջակալներ եւ Հունարեն լեզվի ծրագիր» - ասաց սամցխե Ջավախեթիի Հույների միավորված միության «Պատրիդայի» նախագահ Միխեիլ Կոլիկիդը:

Կիրակնօրյա դպրոցում երկու տաս հոգանոց խումբ ստեղծվեց, հունարեն լեզուն սովորեցնում է պրոֆեսիոնալ ուսուցիչը, որը հունարենից բացի տիրապետում է վրացերեն, հայերեն, եւ ռուսերեն լեզուներին, հինչը հշտացնում է աշակերտների հետ հարաբերությունը:



